ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3038 - Ա **20 ապրիլի 2009թ.**

ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 28 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍՄԻԿ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ՊԵՏՐՈՍ ՀԱՅԿԱԶԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ԳԱՅԱՆԵ ՀԱՅԿԱԶԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԱԼԼԱ ՍԱՐԳՍԻ ՌԱՄԱԶՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հասմիկ Պետրոսի Առաքելյանի (ծնված 06.05.1978թ.), Կարեն Պետրոսի Առաքելյանի (ծնված 18.11.1976թ.), Պետրոս Հայկազի Առաքելյանի (ծնված 14.10.1947թ.), Գայանե Հայկազի Գրիգորյանի (ծնված 20.03.1954թ.), Ալլա Սարգսի Ռամազյանի (ծնված 26.02.1951թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքի հ.28 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 378.07քմ, որից 85.04քմ մակերեսով հողամասը Հասմիկ Պետրոսի Առաքելյանին, Կարեն Պետրոսի Առաքելյանին, Պետրոս Հայկազի Առաքելյանին, Գայանե Հայկազի Գրիգորյանին, Ալլա Սարգսի Ռամազյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 293.03քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1937 թվականը, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 15.04.2009թ. հ.20/2-Ե/245 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.04.2009թ. հ.20-Ել-3093 եզրակացությունը, համաձայն որի Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքի հ.28 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքի հ.28 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հասմիկ Պետրոսի Առաքելյանի, Կարեն Պետրոսի Առաքելյանի, Պետրոս Հայկազի Առաքելյանի, Գայանե Հայկազի Գրիգորյանի, Ալլա Սարգսի Ռամազյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ օրինական 85.04քմ մակերեսով հողամասին կից 293.03քմ մակերեսով հողամասի

չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 293.03քմ մակերեսով հողամասի նկատմամբ (ընդհանուր համատեղ սեփականություն է Ամալյա Գալստյանի հետ)։

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

3. Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքի հ.28 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքի հ.28տուն>>։

4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Հասմիկ Պետրոսի Առաքելյանի, Կարեն Պետրոսի Առաքելյանի, Պետրոս Հայկազի Առաքելյանի, Գայանե Հայկազի Գրիգորյանի, Ալլա Սարգսի Ռամազյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ